Երիտասարդների կամավորական գործունեության գաղափարախոսական հիմքերն ու մշակութային դրսևորումները Հայաստանում

Տատյանա Դարբինյան

Անոտացիա

Տատյանա Դարբինյանի ավարտական աշխատանքում պատշաճ հիմնավորվածությամբ անդրադարձ է արվում հայաստանյան հասարակության շրջանակներում ակտուալ հիմնախնդրի՝ մանրամասն ներկայացնելով հայաստանյան երիտասարդների կամավորական գործունեության գաղափարախոսական հիմքերն ու մշակութային դրսևորումները: Անդրադառնալով քաղաքացիական հասարակության հայեցակարգերի քննությանն ու կամավորականությունը սահմանելով որպես սոցիալական գործողություն՝ հեղինակն ուսումնասիրում է հայաստանյան երիտասարդ կամավորականների կենսափորձը: Որպես վերլուծական հիմք ընդունելով նարատիվ սեմիոտիկայի մեթոդաբանությունը՝ հեղինակը մանրամասնորեն նկարագրել է կամավորականության մոտիվացիոն մեխանիզմներն ու կամավորականությունը լեգիտիմացնող պրակտիկաները՝ հայաստանյան երիտասարդների կենսափորձում ուրվագծելով փոխպայմանավորող լեգիտիմության և մոտիվացիոն ճգնաժամեր:

Սույն նյութը պատրաստված է 2021 թվականի մայիսին ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում ներակայացված և պաշտպանված ավարտական աշխատանքի հիման վրա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անոտացիա **2**

Ներածություն **4**

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքերը **8**

Հայաստանյան երիտասարդների կամավորական գործունեության միջավայրը 12

Հայաստանյան երիտասարդների կամավորական պրակտիկաները 17

Եզրակացություն **22**

Գրականություն **24**

Աբստրակտ **27**

Abstract **27**

Ներածություն

Աշխատանքի արդիականությունը. 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի առանցքային զարգացումներից է կամավորական պրակտիկաների համընդհանրացումը՝ «կազմակերպված կամավորական գործունեության տարածումն աշխարհի բոլոր կետերում (Salamon et al., 2003)»: «Կամավորության համաշխարհայնացումը» հռչակվել է 1997 թվականի նոյեմբերին, երբ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեան 2001 թվականը սահմանեց որպես «Կամավորների միջազգային տարի»[1]: Հասարակական հարաբերությունների անհատականացման արդի միտումներն էլ ավելի են ընդգծում բնույթով այլասիրական այնպիսի պրակտիկաների սոցիոլոգիական ուսումնասիրությունը, ինչպիսին կամավոր աշխատանքն է (Hustinx et al., 2010; Musick & Wilson, 2008; Wilson, 2000; Wilson & Musick, 1997): Կամավորականությունը հանդիսանում է մասնակցայնության, սոցիալական ներառականության, ժողովրդավարացման և քաղաքացիական հասարակության կայացման առանցքային բնութագրիչներից մեկը: Կամավորական պրակտիկաների համապարփակ ուսումնասիրությունը քաղաքացիական հասարակության կայացվածության և քաղաքացիական գիտակցության ձևավորվածության հասկացման ճանապարհն է: Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր անհատական կամավորական ակտ կարող է դիտվել որպես շատ ավելի լայն սոցիալական կառուցվածքների բաղադրատարր (Piliavin et al., 2002):

Վերջին տասնամյակներում կամավորության՝ որպես զաղափարախոսության տարածման և կամավորության՝ որպես քաղաքացիական պրակտիկայի ներդրման միտումներն առանձնահատուկ դրսևորում են ստանում հետխորհրդային փոխակերպումների համատեքստում (Howard, 2003; Juknevičius & Savicka, 2003): Կամավորական պրակտիկաների տարածման տեսանկյունից Հարավային Կովկասում հետխորհրդային հանրապետությունների շարքում առանձնանում է Հայաստանը (Gevorgyan & Galstyan, 2016; Y. Paturyan & Gevorgyan, 2014; Y. J. Paturyan & Gevorgyan, 2017). ըստ 2011-2019 թվականների տվյալների՝ վերջինս հարևան Վրաստանի համեմատությամբ ունի կամավորական գործունեության մեջ ներգրավվածության ավելի բարձր ցուցանիշ. Հայաստանի երիտասարդների մոտ 30%-ը ամեն տարի կատարում է կամավոր աշխատանք՝ առանց որևէ փոխհատուցման[2]:

Զուգահեռաբար, Հայաստանում կամավորական գործունեությունը դեռևս շարունակում է մնալ իրավականորեն չկարգավորվող տիրույթ. կամավորական գործունեության վերաբերյալ օրենքի նախագիծը չի ստացել իրավական ուժ[3]: Հայաստանում կամավորական գործունեության որոշ ասպեկտներ կարգավորվում են «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, սակայն վերջինս ունի էական բացեր կամավոր գործունեության համապարփակ իրավական կարգավորման տեսանկյունից (Պանով և այլք, 2017): Ի հակադրություն՝ տասնամյակներ շարունակ

---

[1] *ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի թիվ 52/17 բանաձև*, 1997

https://www.unv.org/Publications/UNGA-Resolution-5217-Declaration-2001-International-Year-Volunteers

[2] Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան, *Կովկասյան բարոմետր*
https://www.crrc.am/barometer/

[3] Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, 2020: *Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին ՀՀ օրենքի նախագիծ*

https://www.e-draft.am/projects/2516/justification

շատ երկրներ և շատ կազմակերպություններ ունեն կամավոր աշխատանքի իրավական կարգավորումներ և կամավորական գործունեությանը վերաբերող ռազմավարություններ (International Center for Not-for-Profit Law (ICNL), 2010; International Federation of Red Cross and Red Crescent Societies et al., 2004; Nelson, 2005; United Nations Volunteers (UNV), 2011): Չնայած ՀՀ-ում վերոնշյալ իրավական կարգավորումների և կամավորության խթանման պետական քաղաքականության բացակայությանը՝ հայաստանյան ՔՀԿ-ները ակտիվորեն ներգրավում են կամավորներ. ըստ 2019 թվականի տվյալների՝ հայաստանյան ՔՀԿ-ների 80%-ը նախորդ տարվա ընթացքում ներգրավել է առնվազն 1 կամավոր (United States Agency for International Development et al., 2020):

Այսպիսով, քաղաքացիական հասարակության կայացման համատեքստում երիտասարդների կամավորականությունը՝ մյուսների նկատմամբ «բարիք ստեղծելու» սոցիալական դիրքորոշումը և ակտիվ քաղաքացիության զարգացումն այն կարևորագույն թեմաների շարքում են, որոնք պահանջում են հասցեական ձևակերպում (Մկրտիչյան և այլք, 2016, էջ 14):

Այս համատեքստում ակտուալանում է ՔՀԿ ոլորտում երիտասարդների կամավորական փորձառության գաղափարախոսական և մշակութային պրակտիկաների ուսումնասիրությունը:

Հետազոտության նպատակն է վերհանել հայաստանյան երիտասարդների կամավորական գործունեության գաղափարախոսական հիմքերն ու մշակութային դրսևորումները:

Հետազոտության օբյեկտն են հայաստանյան ՔՀԿ ոլորտում կամավորական փորձառություն ունեցող 18-35 տարեկան երիտասարդները, իսկ **առարկան՝** հայաստանյան երիտասարդների կամավորական գործունեության գաղափարախոսական և մշակութային բաղադրիչները:

Տեղեկատվության հավաքման մեթոդներն են.

1) **Երկրորդային տվյալների վերլուծություն՝** որպես տեղեկատվության հավաքման հետախուզական մեթոդ: Տվյալ մեթոդի կիրառումը նպատակ ունի նկարագրել վերջին տասնամյակում հայաստանյան երիտասարդների շրջանում կամավորական գործունեության տարածման միտումները և սահմանել հետազոտության հաջորդ փուլի մասնակիցների ընտրության չափանիշները: Հետազոտության այս փուլում օգտագործվել են «Կովկասյան Բարոմետր» լոնգիտուդային հետազոտության 2011-2019 թվականների տվյալների բազաները և «Անկախության սերունդ» երիտասարդների շրջանում իրականացված հետազոտության (Մկրտիչյան և այլք, 2016) տվյալների բազան:

2) **Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույց՝** որպես տեղեկատվության հավաքման հետախուզական մեթոդ: Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցի մեթոդի կիրառումը նպատակ ունի վերհանել ՔՀԿ ոլորտում հայաստանյան երիտասարդների կամավորական ներգրավման հիմնախնդիրները:

3) **Նարատիվ խորին հարցազրույցի մեթոդը՝** որպես տեղեկատվության հավաքման հիմնական մեթոդ: Այս մեթոդի կիրառման նպատակն է վերհանել երիտասարդների կամավորական փորձառության պատումները: Վերջիններիս վերլուծության համար ընտրվել է նարատիվ սեմիոտիկայի մեթոդաբանությունը:

Հետազոտության ընտրանքը

1) Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցի մեթոդի պարագայում մասնակիցների ընտրության նպատակով օգտագործվել է ձնակույտի տեխնիկան: Հարցազրույցներ անցկացվել են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների 5 ներկայացուցիչների հետ: Ընտրվել է 2 կազմակերպություն Երևանից և 3 մարզային կազմակերպություն (Արմավիրի մարզ, Շիրակի մարզ, Տավուշի մարզ):
2) Տեղեկատվության հավաքման հիմնական մեթոդի՝ նարատիվ խորին հարցազրույցի համար իրականացվել է տիպային ընտրանք: Ընտրության չափանիշները դուրս են բերվել քանակական տվյալների և առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցների վերլուծության արդյունքում: Որպես ընտրության չափանիշ՝ առանձնացվել են երիտասարդների տարիքը, սեռը և բնակավայրը: Արդյունքում վերհանվել է երիտասարդների կամավորական փորձառությունը նկարագրող 8 պատում:

Տեսական և կիրառական նշանակությունը

Սույն հետազոտության մեջ առաջարկվող վերլուծական սխեման կարող է կիրառվել քաղաքացիական վարքի այլ դրսևորումների մոտիվացիոն մեխանիզմների ուսումնասիրություններում: Հետազոտությունը կարող է օգտակար լինել երիտասարդության պետական ռազմավարության և կամավորականության պետական քաղաքականության մշակման համար: Հետազոտությունը կարող է օգտակար լինել նաև ՔՀԿ ոլորտի ներկայացուցիչների համար՝ երիտասարդ կամավորների հետ աշխատանքի արդյունավետ կազմակերպման և կամավորների ներգրավման ռազմավարության մշակման տեսանկյունից:

Հիմնական հասկացությունների սահմանում

Երիտասարդներ – Հայաստանի հանրապետության 18-35 տարեկան քաղաքացիներ

Քաղաքացիական հասարակություն – ազատ քաղաքացիների և կամավոր սկզբունքներով ձևավորված միությունների ու կազմակերպությունների ինքնաարտահայտման ոլորտ է, որոնք անկախ են պետական իշխանության ուղղակի միջամտությունից և ազատ՝ կամքի դրսևորման տեսանկյունից

Քաղաքացիական հասարակության կազմակերպություն – ոչ պետական և ոչ առևտրային, կամավոր միավորում, որն անկախ է պետությունից և շուկայից (համայնքային կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ)

Կամավոր աշխատանք – ոչ պարտադիր կամ ոչ հարկադիր անվճար աշխատանք, որը տեղի է ունենում կազմակերպական համատեքստում և կատարվում է ուրիշների, ողջ հասարակության կամ որոշակի կազմակերպության օգուտի համար

Կամավորական գործունեություն – ՔՀԿ ոլորտում կամավորության վրա հիմնված, հանրօգուտ, անվարձահատույց, ոչ պարտադիր կամ ոչ հարկադիր իրականացվող գործունեություն

Մոտիվացիայի ճգնաժամ – սոցիալ-մշակութային համակարգի ճգնաժամ, որի պարագայում համակարգը չի ապահովում բավարար իմաստ գործողության իրականացման համար (Habermas, 1973, p. 49)

ՔՀ լեգիտիմության ճգնաժամ – քաղաքացիական հասարակության առանցքային արժեքների լեգիտիմության պակաս

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքերը

«Քաղաքացիական հասարակություն» հասկացությունն ուսումնասիրության առարկա է մի շարք գիտակարգերի համար։ Վերջիններիս թվում առանցքային է նաև սոցիոլոգիան՝ քաղաքացիական հասարակության սոցիոլոգիական հայեցակարգերով։ Խոսելով քաղաքացիական հասարակության մասին՝ հարկ է նշել, որ ինչպես շատ այլ հասկացություններ, վերջինս չունի մեկ ընդհանրական սահմանում. տարբեր տեսաբաններ տարբեր պատմական ժամանակաշրջաններում միանգամայն տարբեր կերպ են սահմանել քաղացիական հասարակությունը (Cohen & Arato, 1992; Edwards, 2004; Ehrenberg, 1999; Seligman, 1992)։ Լայն առումով՝ քաղաքացիական հասարակությունը սոցիալական կյանքի այն ոլորտն է, որը տարանջատվում է պետությունից, տնտեսությունից (շուկայից) և մասնավոր ոլորտից։ Քաղաքացիական հասարակությունը սահմանվում է որպես անհատի և արդի պետության միջև գտնվող խմբերի, հանրույթների և կապերի խիտ ցանց (Kenny, 2016)։ Քաղաքացիական հասարակության սահմանման մոտեցումներից մեկն առաջարկում է ֆրանկֆուրտյան քննադատական դպրոցի ներկայացուցիչ Յ. Հաբերմասը։ Վերջինս քաղաքացիական հասարակության հայեցակարգման հիմք է դարձնում հանրային ոլորտ հասկացությունը (Habermas, 1989)։ Այստեղ կենտրոնական է քաղաքացիական կամ հասարակական ինքնակազմակերպման գաղափարը, որի առանցքը հաղորդակցությունն է (Adloff, 2018, p. 402)։ Ըստ Հաբերմասի՝ հանրային ոլորտը որոշակի տարածություն է, որում համագործակցում կամ հակազդում են համակարգը և կենսաշխարհը։ Այդ տրամաբանությամբ՝ քաղաքացիական հասարակությունը միջանկյալ ոլորտ է՝ մի կողմից քաղաքական համակարգի, մյուս կողմից կենսաշխարհի մասնավոր տիրույթի միջև (Adloff, 2018)։ Այսպիսով, Հաբերմասի սահմանմամբ՝ քաղաքացիական հասարակությունը հանրային ոլորտն է։ Հաբերմասի «հանրային ոլորտն» իրականացնում է հասարակական հարաբերությունների ռեֆլեքսիայի և պետության վերահսկողության գործառույթները, դրանում «հանրային մասնակցությունը ծավալվում է ազատ, կամավոր և գիտակցական հիմքի վրա, իսկ քննարկման գործընթացը լիովին դուրս է շուկայի և պետության արտաքին վերահսկողությունից» (Habermas, մեջբերված՝ Սաղաթելյան, 2020, էջ 379)։

Քաղաքացիական հասարակության բնութագրիչների շարքում խիստ կարևոր տեղ է զբաղեցնում կամավորականությունը։ Կամավորականությունը քաղաքացիական հասարակության ձևավորման և կայացման առանցքային սկզբունք է։ Այդ տրամաբանությամբ՝ կամավորության հիմքով ձևավորված ընկերակցություններն ու կազմակերպությունները, կամավորական գործունեությունը և կամավոր աշխատանքը միանշանակորեն կարող են կապվել քաղաքացիության հետ (Musick & Wilson, 2008, p. 459-485) և դիտվել որպես քաղաքացիական հասարակության կայացվածության ցուցիչներ։ Այլ կերպ ասած, կամավորականությունը կարող է դառնալ քաղաքացիական հասարակության սոցիոլոգիական ուսումնասիրման և ախտորոշման հիմք։

Կամավորական աշխատանքն այլասիրական (ալտրուիստական) վարքի ձև է, որի նպատակն է օգնություն տրամադրել ուրիշներին՝ խմբին, կազմակերպությանը, գործին, համայնքին, առանց նյութական փոխհատուցման որևէ ակնկալիքի (Musick & Wilson, 2008, p. 3)։ Կամ ավելի հակիրճ՝ կամավորությունը ցանկացած գործունեությունն է, որի դեպքում ժամանակը տրամադրվում է՝ մեկ այլ մարդու, խմբի կամ գործի անվճար կերպով օգնելու համար (Wilson, 2000)։ Միջազգային մի շարք մարմիններ՝ Միավորված ազգերի կազմակերպությունը, Աշխատանքի միջազգային կազմակերպությունը և Եվրոպական միության խորհուրդը, սահմանել են կամավորությունը։ Աշխատանքի միջազգային կազմակերպության սահմանման համաձայն, կամավորական աշխատանքը «չվճարվող ոչ պարտադիր աշխատանք է, այսինքն՝ ժամանակ, որ անհատներն անվճար հատկացնում են այնպիսի աշխատանքի համար, որը կա՛մ կազմակերպության միջոցով,

կա՛մ ուղղակիորեն կատարվում է այլ՝ իրենց տնային տնտեսության անդամ չհանդիսացող անձանց համար» (International Labour Office, 2011, p. 13):

Կամավորության վերաբերյալ ուսումնասիրությունների զգալի մասի նպատակն է պատասխանել հետևյալ հարցին. «*Ինչու՞ են մարդիկ կատարում կամավոր աշխատանք*»: Այդ հարցին պատասխանելու համար որպես կամավորական աշխատանքի բացատրական մոդել տարբեր գիտակարգերի շրջանակներում առաջ են քաշվել մոտիվացիոն մեխանիզմների որոշակի հայեցակարգեր: Սույն հետազոտական աշխատանքում որպես հիմք է ընդունվել կամավորականության շարժառիթների ֆունկցիոնալ տեսությունը: Տեսականորեն այս մոտեցումը համակարգում և միավորում է կամավորության մոտիվացիոն ասպեկտների վերաբերյալ ավելի վաղ կատարված ուսումնասիրությունների արդյունքները (Clary et al., 1996, Clary et al., 1998) և առաջարկում մոտիվների օպերացիոնալացում՝ վերջիններս դարձնելով էմպիրիկորեն չափելի: Այս տեսությունը, որը մշակվել է սոցիալական հոգեբանության շրջանակներում, փորձում է բացատրել, թե ինչու են մարդիկ որոշում և ինչու են շարունակում կամավոր աշխատանք կատարել: Այս տեսության շրջանակներում առանձնացնում են կամավորության վեց ֆունկցիոնալ մոտիվ (տե՛ս Աղյուսակ 1) (Clary & Snyder, 1999):

Աղյուսակ 1. Կամավորության ֆունկցիաներ

	Մոտիվացիա	**Կոնցեպտուալ սահմանում**
1.	Արժեքային	Անհատը կամավոր աշխատանք է կատարում՝ ելնելով կարևոր արժեքներից, օրինակ՝ մարդասիրությունից:
2.	Ուսուցողական	Կամավորը ձգտում է ավելին սովորել կամ հմտություններ զարգացնել:
3.	Ինքնաիրացման	Կամավորության շնորհիվ կարելի է ունենալ հոգեբանական աճ և զարգացում:
4.	Կարիերային	Կամավորը նպատակ ունի կամավորության միջոցով ունենալ հաջողություն կարիերայում:
5.	Սոցիալական	Կամավորությունը հնարավորություն է տալիս անհատին ամրապնդել սոցիալական կապերն ու հարաբերությունները:
6.	Պաշտպանական	Անհատը կամավորության միջոցով թուլացնում է բացասական զգացմունքները և թիրախավորում անձնական խնդիրները:

Սոցիոլոգիայի ողջ նպատակն է մեկնաբանել սոցիալական գործողության իմաստը (Weber, 1956, p. 7): Կամավորությունը կարելի է կապել Մաքս Վեբերի ռացիոնալության հայեցակարգի և սոցիալական գործողության տեսության հետ:

Մաքս Վեբերը սոցիալական գործողության սահմանման հիմքում դնում է երկու առանցքային ասպեկտներ՝ սուբյեկտիվ իմաստ և ուղղվածություն դեպի ուրիշը: Այսինքն՝ այս սահմանման համաձայն, մարդու վարքը կարող է մեկնաբանվել որպես սոցիալական գործողություն, նախ եթե գործողության սուբյեկտը որևէ կերպ իմաստավորում է այդ գործողությունը: Բացի այդ, առանցքային է, որ այդ սուբյեկտիվ իմաստավորումը որոշակիորեն կապ ունենա մեկ ուրիշ անձի վարքի հետ, ընդ որում՝ այդ կապը պայմանավորում է գործողության ընթացքը: Մասնավորապես սա վերաբերում է կամավորությանը: Կամավորությունը ևս կարելի է վեբերյան բնորոշմամբ սահմանել որպես սոցիալական գործողություն, քանի որ կամավոր աշխատանքը ևս ունի վերոնշյալ երկու բաղադրիչները. կամավորության յուրաքանչյուր ակտ սուբյեկտիվորեն

իմաստավորվում է կամավորի կողմից, և այդ ակտն առնչվում է որևէ այլ անձի կամ անձանց՝ որևէ «ուրիշի» կամ «ուրիշների»:

Մ. Վեբերն առաջարկում է նաև սոցիալական գործողության տիպաբանում: Ընդ որում՝ որպես տիպաբանության հիմք ընտրված է գործողության ռացիոնալության աստիճանը: Համաձայն վեբերյան դասակարգման մոդելի՝ սոցիալական գործողության տեսակները չորսն են՝ նպատակառացիոնալ գործողություն, արժեքառացիոնալ գործողություն, աֆեկտիվ գործողություն, ավանդական գործողություն:

Համարելով սոցիալական գործողություն՝ կամավորությունը ևս կարելի է դիտարկել վեբերյան չորս տիպերի համատեքստում: Համադրելով Մ. Վեբերի գործողության տիպերի սահմանումը և մոտիվացիաների դասակարգման ֆունկցիոնալ մոդելը՝ նպատակառացիոնալ գործողության ներքո կարելի է ներառել կարիերային և ուսուցողական գործառույթները, արժեքառացիոնալ գործողության պարագայում՝ արժեքային գործառույթը, սոցիալական գործողության ավանդական տիպը կարելի է զուգահեռել մոտիվացիաների ֆունկցիոնալ դասակարգման սոցիալական գործառույթի հետ, իսկ աֆեկտիվ տիպը՝ պաշտպանական և ինքնաիրացման գործառույթների հետ (տե՛ս Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Կամավորությունը որպես սոցիալական գործողություն



Այս երկու հայեցակարգերի հասկացութային համադրումը հնարավորություն է տալիս ստանալ կամավորության մոտիվացիոն մեխանիզմների ուսումնասիրման կոնցեպտուալ մոդել: Վերջինս հասարակական շահ–անձնական շահ հակադրությունն է՝ որպես իմաստային քառակուսու կառուցման հիմք:

Քառակուսու դոմինանտ դրական արժեքը կլինի հասարակական շահը, իսկ վերջինիս հակադիր արժեքը՝ անձնական շահը: Իմաստային քառակուսու մեջ հասարակական շահ–անձնական շահ

հակադրամիասնության համար որպես հակասող և կոմպլեմենտար զույգեր հանդես կգան ոչ հասարակական շահ և ոչ անձնական շահ զույգերը (տե՛ս Գծապատկեր 2)։

Հասարակական շահի բևեռի հետ կարելի է զուգահեռել սոցիալական գործողության արժեքառացիոնալ տիպը։ Անձնական շահի իմաստային տիրույթին համապատասխանում է նպատակառացիոնալ գործողությունը։ Այդ տրամաբանությամբ՝ սոցիալական գործողության աֆեկտիվ տիպը համընկնում է ոչ հասարակական շահի, իսկ ավանդական գործողության տիպը՝ ոչ անձնական շահի հետ։

Գծապատկեր 2. Խորքային կառուցվածքի իմաստային քառակուսի



Հայաստանյան երիտասարդների կամավորական գործունեության միջավայրը

Սույն հետազոտության շրջանակներում օգտագործված հետախուզական մեթոդները՝ քանակական տվյալների երկրորդային վերլուծությունը և առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցները, հնարավորություն են տալիս նկարագրել հայաստանյան երիտասարդների գործունեության արտաքին միջավայրը, որում առանցքային են կամավորության ինստիտուցիոնալ կարգավորումները, սոցիալական համատեքստը և ՔՀԿ միջավայրը։

ՔՀԿ առանցքային տեղեկատուները փաստում են, որ Հայաստանում կամավորականության տարածման միտումները վերջին տասնամյակում աճում են. ոլորտում նկատվում է որոշակի դրական փոփոխություն։

«Ուղղակի Հայաստանում կամավորության, կամավորություն հասկացությունը մի փոքր նոր է։ Այսինքն՝ երևի 10-15 տարի, էս վերջին երևի 10 տարվա մեջ ա, որ ինքը լավ զարգացել ա։ Ու արդեն մարդիկ հասկանում են օգուտը կամավորության։ Այսինքն՝ Հայաստանում տենդենցը դեռ նոր ա, բայց արդեն երիտասարդների շրջանում բավականին տարածված ա էդ կամավորություն անելու ցանկությունը...»

[Առանցքային տեղեկատու 5, մարզ]

Ընդ որում, առանցքային տեղեկատուները հատկապես ընդգծում են երիտասարդների ներգրավվածությունը կամավոր աշխատանքներում և համեմատաբար ավելի բարձր տարիքային խմբերում ներգրավվածության խիստ ցածր մակարդակը։

Ըստ ՀՌԿԿ-Հայաստանի կողմից իրականացված «Կովկասյան Բարոմետր» լոնգիտուդային հետազոտության տվյալների՝ 2019-2020 թվականներին 18-35 տարեկան հարցվողների 29,8%-ը նշել է, որ վերջին 6 ամիսների ընթացքում կատարել է կամավոր աշխատանք՝ առանց փոխհատուցման։ Հարկ է շեշտել, որ այս տվյալը վերաբերում է ցանկացած տիպի կամավոր աշխատանքի՝ թե՛ ֆորմալ, թե՛ ոչ ֆորմալ։ Համեմատելով 2011-2019 թվականների հետազոտությունների տվյալները՝ կարելի է փաստել, որ կամավոր աշխատանքներում երիտասարդների ներգրավվածության ցուցանիշն էականորեն չի փոխվել վերջին տասնամյակում. ներգրավվածության ամենաբարձր ցուցանիշը նկատվում է 2015 թվականին, երբ երիտասարդների 37%-ը նշել է, որ վերջին 6 ամիսների ընթացքում կատարել է կամավոր աշխատանք (տե՛ս Գծապատկեր 3)։



«Կովկասյան բարոմետր» հետոզոտության ավելի վաղ տարիների տվյալները և «Անկախության սերունդ» հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ կամավոր աշխատանքներում

ներգրավվածության համատեքստում գոյություն ունեն սեռով պայմանավորված տարբերություններ: Բոլոր հետազոտությունների տվյալները փաստում են, որ արական սեռի երիտասարդներն ավելի շատ են կատարում կամավոր աշխատանք, քան իգական սեռի ներկայացուցիչները, և այդ տարբերությունները վիճակագրորեն հավաստի և նշանակալի են (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Երիտասարդների ներգրավվածությունը կամավորական աշխատանքներում ըստ սեռի, 2011-2019 թթ.

	Արական սեռ		Իգական սեռ		X2	df	p	Phi
	Այո	Ոչ	Այո	Ոչ				
Կովկասյան բարոմետր 2011	31.4%	68.6%	18.3%	81.7%	16.445a	2	.000	.155
Կովկասյան բարոմետր 2013	48.2%	51.8%	21.9%	78.1%	7.822a	1	.000	.275
Կովկասյան բարոմետր 2015	48.5%	51.5%	30.2%	69.8%	18.338a	1	.000	.182
Անկախության սերունդ 2016	20.3%	79.7%	14.4%	85.6%	7.145a	1	.008	.077
Կովկասյան բարոմետր 2017	46.6%	53.4%	28.9%	71.1%	14.860a	1	.000	.178
Կովկասյան բարոմետր 2019	43.7%	56.3%	22.6%	77.4%	17.517a	1	.000	.218

Ըստ «Կովկասյան բարոմետր»-ի 2017 թվականի հետազոտության տվյալների՝ 18-25 տարեկան հարցվողների 41%-ը վերջին 6 ամիսներին ներգրավված է եղել կամավոր աշխատանքներում, իսկ 26-35 տարեկանների՝ 32%-ը, (տե՛ս Գծապատկեր 4): X^2 վիճակագրական թեստի կիրառումը ցույց է տալիս, որ ըստ տարիքի՝ այս տարբերությունը վիճակագրորեն հավաստի է և նշանակալի (X^2=4.659a>$X^2_{\text{կրիտիկական}}$, df=1, p=.031, Phi=.1):



Ֆորմալ կամավորության ուսումնասիրության տեսանկյունից կարևոր է վերհանել հասարակական կազմակերպությունների նկատմամբ վստահության ցուցանիշները: Հասարակական կազմակերպությունների նկատմամբ վստահության հարցին 2011-2019 թվականների ընթացքում տրված պատասխանները դիտարկելիս նկատելի է, որ բոլոր հետազոտությունների ժամանակ երիտասարդների զգալի մասը նշել է «ոչ վստահում եմ, ոչ էլ չեմ վստահում» տարբերակը, «ավելի շուտ վստահում եմ» պատասխանողների քանակը որոշակիորեն աճել է՝ 2019 թվականին դառնալով 29% (տե՛ս Գծապատկեր 5):



ՔՀԿ ներկայացուցիչները, խոսելով կազմակերպության համար կամավորների ներգրավման նշանակության մասին, առանձնացնում են կամավորներ ներգրավելու երկու հիմնական դրական ասպեկտ՝ կամավորները կազմակերպության համար լրացուցիչ մարդկային ռեսուրս են. նրանք, ովքեր կարող են էական աշխատանք կատարել, նպաստում են կազմակերպության հեղինակության և ճանաչելիության բարձրացմանը:

«ՀԿ ոլորտում կամավորները շատ կարևոր են, որովհետև միշտ չի, որ հնարավոր ա հիմնական գրանցված աշխատող ունենալ, իսկ կամավորը, հատկապես փորձով, տարիքով կամավորը, ինքը կարա օգնի տվյալ կազմակերպության աշխատանքներն ավելի համակարգված դարձնել էլի՝ կախված իր հմտություններից»:

[Առանցքային տեղեկատու 5, մարզ]

«Կազմակերպությանը տալիս ա, առաջին հերթին, հեղինակություն, ճանաչում: Կազմակերպությանը ուժ ա տալիս, որովհետև մարդիկ տեսնում են, որ էդ կազմակերպության նկատմամբ կա վստահություն ու էնտեղ շատ մարդ ա գնում, շատ մարդիկ են հավաքվել և այլն: Այսինքն՝ կազմակերպության համար դա շատ մեծ առավելություն ա, երբ որ դու կամավորների լայն շրջանակ ունես, ովքեր որ պատրաստ են ինչ-որ բան անել և այլն: Այսինքն՝ հեղինակություն առաջին հերթին»:

[Առանցքային տեղեկատու 4, Երևան]

ՔՀԿ տեսանկյունից կամավորների ներգրավման բացասական ասպեկտներ ևս ընդգծվում են, սակայն դրանք էականորեն ավելի քիչ են: Մասնավորապես, որպես հիմնական բարդություն՝ բոլոր առանցքային տեղեկատուները շեշտում են կամավորների հետ աշխատանքի

ժամանակատարությունը: Որպես երկրորդ բարդություն՝ նշվում է կամավորների շարունակական մասնակցության խթանումը:

Առանցքային տեղեկատուներն ընգծում են մարզ-մայրաքաղաք տարբերությունների առկայությունը երիտասարդների՝ կամավոր աշխատանքներում ներգրավվածության տեսանկյունից: Ընդգծվում են մարզերում կամավորականության տարածման բարդություններ՝ համապատասխան հարթակների բացակայություն, հասարակական կազմակերպությունների սակավություն, հասանելիության խնդիր և այլն: Դրան զուգահեռ, առանցքային տեղեկատուները նշում են, որ վերջին տարիներին հայաստանյան մարզերում նկատվում են դրական տեղաշարժեր, և մարզային երիտասարդների շրջանում կա ավելի մեծ հետաքրքրվածություն կամավորականությամբ:

«Ամբողջ, չգիտեմ, ամեն ինչ տեղի ա ունենում Երևանում: Ու էդ դեպքում, դրա համար, մարզերը քիչ թե շատ հեռու են մնում էս ամենից: Բայց ամեն դեպքում, ինչպես նշեցի, վերջին տարիներից էս իրավիճակը բավականին փոխվում ա, և մարդկանց ներգրավվածությունը, ակտիվությունը շատ ավելի ա...»

[Առանցքային տեղեկատու 3, Երևան]

Առանցքային տեղեկատուները նշում են նաև Հայաստանում կամավորականության կայացվածության հիմնական խնդիրները: Մասնավորապես, ընդգծվում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կամավոր աշխատանքի թյուրըմբռնումը հասարակության անդամների կողմից, կամավորության բացասական սանկցավորումը և առկա կարծրատիպերը, կամավորության վերաբերյալ տեղեկատվության պակասը, հասանելիության խնդիրը մարզերում:

«Ու առաջին հերթին, այսինքն՝ կամավոր հասկացության հասկանալիությունը կարելի ա ընդգրկել: Երկրորդ տեղում կարծրատիպային մտածողությունը՝ որպես խնդիր, արգելքներ, խոչընդոտներ շրջապատից և ընտանիքից: Երրորդը մարզերի պարագայում նշեցի շարժունակության խնդիրն ա, հասանելիության, գալու, ներառվելու, ներգրավվելու հետ կապված»:

[Առանցքային տեղեկատու 1, մարզ]

«Տեսեք, հիմնականում երիտասարդների շրջանում կարող եմ ասել, որ իրենք՝ էս պահին ում հետ մենք աշխատում ենք, հիմնականը էն է, որ չեն ուզում Հայաստանում անել կամավորություն: Հիմնականում ուզում են անել արտերկրում, որովհետև էնտեղ ավելի շատ է գնահատվում: Իրենք էստեղ մտածում են, որ, չգիտեմ, դա ամոթ է, դա խնդիր է, որ իրենք կամավոր են: Ենթադրենք իրենց ընկերներից մեկը կամավոր չէ, իրենք կամավոր են՝ ավելի լավ է չաշխատել, քան աշխատել անվարձահատույց, ու, չգիտեմ, ինչի համար անել դա: Շատերը էդ ձև են մտածում»:

[Առանցքային տեղեկատու 2, մարզ]

Կամավորական գործունեության կայացվածության խնդիրների շարքում ՔՀԿ ներկայացուցիչները շեշտում են նաև կամավորության զարգացման պետական քաղաքականության և իրավական կարգավորումների բացակայությունը:

«Ու էս առումով որ լինի, մենք ավելի շուտ լինենք կայացած հասարակություն, հասնենք ժողովրդավարության, ունենանք լավ քաղհասարակություն, էս ամեն ինչի համար պետության դերը շատ մեծ ա, որովհետև էս փուլում պետությունը պետք ա ուղենիշներ սահմանի, պետությունը պետք ա ուղենիշներ սահմանի ու պետք ա չկրկնի էն ինչ... Պետությունը էսօր ի՞նչ ա, բացի շաբաթօրյակից կամավորական ոչ մի բան չի անում»:

[Առանցքային տեղեկատու 4, Երևան]

Պետության դերը կամավորականության զարգացման տեսանկյունից հատկապես ընդգծվում է համապատասխան օրենսդրական փոփոխությունների և կամավոր աշխատանքի իրավական կարգավորումների վավերացման համատեքստում: Ասվածի հիմնավորումը ՔՀԿ ներկայացուցիչները տալիս են՝ անդրադառնալով ոլորտում կամավորների ներգրավման ոչ պատշաճ պրակտիկաներին: Կարելի է փաստել, որ հայաստանյան ՔՀԿ ոլորտում նկատվում են կամավորների շահագործման պրակտիկաներ, որոնք կամավորականության զարգացման խոչընդոտներից են և պայմանավորում են իրավական կարգավորումների անհրաժեշտությունը:

«... բայց դա շատ վտանգավոր ա, քանի որ չկա որևէ կարգավորում, նշանակում ա յուրաքանչյուր կազմակերպություն ինքը շատ անկախ ա և ինչպես նշեցի, շահագործումը ինքը կարա դիտի որպես կամավորություն, իսկ էն մարդը, ով որ նոր ա հայտնվում էդ կազմակերպությունում, ինքը կարող ա մտածի, որ դա ա կամավորությունը, երբ որ իրան ստիպում են օրական 8 ժամ աշխատել, չգիտեմ, հստակ ինչ-որ գործողություններ անել, գործառույթներ ունենալ, ընդհանրապես կամավորությանը չի մնում, իրան ինչ-որ բան ստիպում են անել, պարտադրում են անել, որը էլի կամավորության սկզբունքների մեջ չի մտնում»:

[Առանցքային տեղեկատու 3, Երևան]

Այսպիսով, առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցները ցույց են տալիս, որ կամավորության թյուրըմբռնման հիմքում հաճախ հենց կազմակերպությունների մոտեցումն է կամավոր աշխատանքին: Կան կազմակերպություններ, որոնք ունեն կամավորների ներգրավման «բացասական մոդելներ», որոնք էական խնդիր են կամավորության ինստիտուցիոնալացման համար:

Օրենսդրական կարգավորումների անհրաժեշտության տեսանկյունից հատկանշական են ոլորտում ինքնակարգավորման և ինքնակազմակերպման պրակտիկաները: Մասնավորապես, մարզային ՀԿ-ներից մեկի ներկայացուցիչը փաստեց կազմակերպությունում կամավորության հատուկ կանոնակարգի առկայության մասին:

«Մեր կազմակերպության կողմից մշակված կանոնակարգ է, այսինքն՝ նույն կանոնակարգը ուրիշ հասարակական կազմակերպությունում չեք գտնի, էդ մենակ մեր կազմակերպության կանոնակարգն է: Մյուսներից տեղյակ չեմ ներքին ունեն կանոնակարգ, թե չէ, բայց մենք ունենք ու յուրաքանչյուր կամավորի հետ տանում եմ ես աշխատանք՝ կանոնակարգն ենք ուսումնասիրում, հետո իրենք դիմում են գրում...»:

[Առանցքային տեղեկատու 2, մարզ]

Ամփոփելով վերը քննարկվածը՝ հայաստանյան երիտասարդների կամավորական գործունեության միջավայրը կարելի է բնորոշել որպես ինքնակարգավորվող ուրույն տիրույթ, որում առկա են ինստիտուցիոնալ, սոցիալ-մշակութային, կազմակերպական, իրավական մի շարք խնդիրներ: Կամավորականությանն առնչվող պետական քաղաքականության բացակայության պայմաններում այդ ինքնակարգավորվող տիրույթի առանցքային դերակատարներ են դառնում ՔՀԿ-ները և երիտասարդ կամավորները:

Հայաստանյան երիտասարդների կամավորական պրակտիկաները

Կամավորական փորձառության պատումների վերլուծությունն իրականացվել է ֆրանսիացի ստրուկտուրալիստ Ալգիրդաս Ժյուլեն Գրեյմասի առաջարկած նարատիվ սեմիոտիկայի մեթոդաբանության տրամաբանությամբ: Գրեյմասի առաջարկած այս մոտեցման մեջ իմաստների կարևորման և վերլուծության հիման վրա գծագրվում է կենսափորձի չափման մոդելը: Այս մոտեցման առանցքը նարատիվներին բնորոշ երեք շերտից բաղկացած կառուցվածքի սահմանումն է: Կառուցվածքային այդ բաղկացուցիչ շերտերն են՝ մակերեսային կառուցվածք, նարատիվ կառուցվածք և խորքային կառուցվածք (Тичер и др., 2009 стр. 174): Կամավորական փորձառության պատումների մակերեսային կառուցվածքի վերհանումից հետո առանձնացվել են նարատիվի թեմատիկ բլոկները՝

1) կամավոր դառնալու փուլ,
2) կամավոր լինելու փուլ (երկու ենթափուլերով)։

Թեմատիկ բլոկների առանձնացումից հետո վերջիններիս կոդավորման արդյունքում վերհանվել են պատումի առանցքային շարժիչ ուժերը, Գրեյմասի բնորոշմամբ՝ ակտանտները և ակտանտային հարաբերությունները (Тичер и др., 2009, стр. 176)։ Ակտանտային հարաբերությունները ներկայացվել են համաձայն նարատիվ տոնի (դրական և բացասական) և մոդի (կոգնիտիվ և պրագմատիկ)։ Այդպիսով, վերհանվել է պատումների նարատիվ կառուցվածքը։ Նարատիվ սեմիոտիկայի ողջ տրամաբանությունը կայանում է նրանում, որ մակերեսային կառուցվածքը պետք է նարատիվ կառուցվածքների վերհանման միջոցով հանգեցնել խորքային կառուցվածքներին: Այստեղ առանցքային են նարատիվի հիմքում ընկած արժեքներն ու նորմերը, և խորքային կառուցվածքի բացահայտման ու հասկացման բանալին սեմիոտիկ (իմաստային) քառակուսին է:

Ուսումնասիրված բոլոր պատումներում ընդգծվում են կամավորական փորձառության միանգամայն տարբեր հետագծեր՝ յուրաքանչյուր առանձին պատում ունի խորքային կառուցվածքի եռափուլ փոխակերպման յուրօրինակ դինամիկա։ Ստորև ներկայացվում է պատումներից մեկը։

Արական սեռ, մարզ, 26-35 տարեկան

Տվյալ պատումի պարագայում առաջին փուլում ակտանտային հարաբերություններում գերակշռում են օգնող ուժերը՝ կոգնիտիվ դրական մակարդակում։ Օգնող ուժերն են ռեֆերենտ խումբը (դասախոս), շրջապատը (կուրսեցիներ), ինքնագնահատականը։ Դասախոսը՝ որպես օգնող ակտանտ, հանդես է գալիս նաև պրագմատիկ դրական մակարդակում։

«Աչքի ընգնող ուսանողներից, ըսպես կարելի ա ասել, ես էի կուրսում: Չէ, էլի ունեինք, էլի ունեինք լավ ակտիվ էրեխեք: Դե, հանդիպման էինք գնացել ընդեղ: Ինքը մեզ տարավ, կուրսով գնացել էինք հանդիպման, հետո առաջարկեց, որ ըստեղ փորձեմ փորձառությունս սկսեմ կամավորությունից: Հետո կուրսից էրեխեքը նաև այլ կազմակերպություններ դիմեցին կամավորության համար: Իրանց կամավորությունն էլ ուրիշ տեղ էղավ: Իմ կամավորությունս ըստեղ առաջի անգամ գնաց»:

Տվյալ պատումի դեպքում՝ կամավոր դառնալու փուլում խանգարող ակտանտներ չեն դրսևորվում կոգնիտիվ կամ պրագմատիկ հարաբերություններում։

Հաջորդ փուլում՝ կամավոր լինելու գործընթացում ակտանտային հարաբերությունները զգալիորեն փոխվում են։ Գերակշռող են դառնում կոգնիտիվ բացասական հարաբերությունները։ Զուգահեռաբար, պրագմատիկ հարաբերություններում խոչընդոտող ակտանտները գերակշռում են օգնող ակտանտներին։

Կոգնիտիվ դրական հարաբերություններում դրսևորվում են կարիերայի առաջընթացի, մասնագիտական գիտելիքի և փորձի կուտակման, սոցիալական կապերի ընդլայնման մոտիվացիաները: Հատկանշական է, որ ընտանիքը հանդես է գալիս և՛ կոգնիտիվ դրական, և՛ կոգնիտիվ բացասական հարաբերություններում:

«[Ծնողների հետ] Տարաձայնություններ էղել է ճիշտն ասած: Էղել է, բայց էն ծայրահեղ վիճակը չի էղել, որ «պտի չգնաս և վերջ» էս կում, էն կում: Էդպիսի լուրջ, լուրջ ընդհարումներ չի եղել ընդանիքի հետ: Հակառակ՝ ընտանիքը նաև ինչ-որ տեղ կողմ է եղել: Ուղղակի ընտանիքը ըսպես ասած կողմ չի եղել, որ ինքը լրիվ չվճարվող է էլի էդ աշխատանքը»:

Պրագմատիկ բացասական հարաբերություններում կամավոր լինելու խոչընդոտը համալսարանական կրթության հետ կամավոր աշխատանքի համատեղումն է:

«Հիմնական խոչընդոտը դասերի հետ էր կապված, որ քննական շրջանում մանավանդ չէինք հասցնում: Դե ընդեղ աշխադանքը զուտ քո համար էր, փորձառություն ունենալու համար էր: Հետո ինքը չվճարվող էր: Իսկ ընդեղ դասերը տուժում էին»:

Կոգնիտիվ բացասական մակարդակում առանցքային է վարձատրվող աշխատանք ունենալու ձգտումը՝ ի հակադրություն կամավոր աշխատանքի և շրջապատի վերաբերմունքը՝ կամավոր աշխատանքին, որտեղ նկատվում է գենդերային տարբերակման շեշտադրում:

«Ու էդ գաղափարը, էդ կարծրատիպը շատերին մղում էր, որ իրանք կամավորությամբ չզբաղվեն: Մանավանդ ասենք տեսեք աղջկա համար ուրիշ է, տղայի համար ուրիշ է կամավորությամբ զբաղվելը: Ըսպես ասեմ, աղջիկը, որպես էդպիսին ժամանակ ավելի շատ է ունենում զբաղվելու կամավորությամբ, քան արական սեռի ներկայացուցիչները: Խնդիրը նաև էսպես ասած աշխատանքի մեջ է, որ դու նաև զուգահեռ ցանկալի է, որ կարողանաս, արական սեռի ներկայացուցիչը կարողանա աշխատել, թե՛ սովորելուն զուգահեռ, թե՛ սովորելուց հետո»:

Կամավոր լինելու երկրորդ ենթափուլում ևս նկատվում են ակտանտային հարաբերությունների զգալի փոփոխություններ: Դոմինանտ են դառնում կոգնիտիվ դրական հարաբերությունները:

Կամավոր լինելու փուլի երկրորդ ֆրագմենտում գերիշխում են կարիերան և ինքնաիրացման միտումը որպես օգնող ակտանտներ:

«Ու հետո կամավորությունը աշխատանքի առումով՝ աշխատանք ունենալու առումով ինքը շատ լավ հնարավորություն է, որպիսի դու կարողանաս քեզ դրսևորես էնպիսին ինչպիսին կաս, բացահայտես նաև քեզ, աշխատես քո վրա, լինես դինամիկ, ճկուն, փոփոխվող, հարվարվող, վերցնող, նորը շուտ ընկալող»:

Եվ

«Ու ուրիշներին օգնելով՝ մենք օգնում ենք նաև ինքներս մեզ: Անտեսանելի ձեռքի տեսությունը միշտ կա: Այսինքն՝ բարիք գործելով՝ դու անտեսանելի ձեռքով դուռ ես բացում քո համար»:

Որպես կամավոր լինելուն խոչընդոտող ակտանտ՝ այս փուլում առաջին անգամ դրսևորվում է հասարակական կազմակերպությունների վերաբերմունքը կամավորի նկատմամբ: Վերջինը խանգարող ակտանտ է և՛ կոգնիտիվ, և՛ պրագմատիկ մակարդակներում:

«Այսինքն ի՞նչ իմաստով. էն ժամանակ, երբ որ իրենց աշխատողին չեն ուզում ինչ-որ չափով վնասել կամ ըսպես ասած իրենց աշխատեղին նեղություն տան և այլն և այլն, փորձում են էդ ամեն ինչը անելով, անել կամավորի ձեռքով: Թե ինչ կլինի, ինչ վնաս կհասցվի կամավորի

առողջությանը, աշխատանքին և այլն և այլն, իրենք դա չեն մտածում: Խոսքը բոլոր կազմակերպությունների մասին չէ ստեղ, բայց էդ ռիսկը կա: Շահագործման ռիսկը կա»:

Կամավորական փորձառության տվյալ պատումը կամավոր դառնալու փուլում բնորոշվում է ոչ անձնական շահի դոմինանտությամբ: Կամավոր աշխատանքներում ներգրավման տեսանկյունից առանցքային դեր է կատարում համալսարանական կրթական միջավայրը: Կամավորությունն այստեղ դրսևորվում է որպես համալսարանական միջավայրում ընդգրկման պրակտիկա:

Երկրորդ փուլում դրսևորվում են կամավոր լինելու մի շարք մշակութային խոչընդոտներ՝ կամավորության նկատմամբ բացասական վերաբերմունք շրջապատից, կամավոր լինելու կամ անվճար աշխատանք կատարելու վերաբերյալ գենդերային տարբերակումներ: Արդյունքում առանցքային են դառնում կամավորություն–աշխատանք հակադրման գաղափարախոսական պրակտիկաները և իմաստային քառակուսում դոմինանտ է դառնում անձնական շահի բևեռը:

Հաջորդ փուլում ևս նկատվում է փոփոխություն՝ ընդգծվում է իմաստային քառակուսու մեջ անձնական շահ–ոչ հասարակական շահ իմաստային տիրույթների համադրումը (տե՛ս Գծապատկեր 6): Վերջինս կարելի է կապել կամավորական ներգրավման գործընթացում ինքնաիրացման և ներքին բավարարվածության ասպեկտների դրսևորման հետ:

Գծապատկեր 6. Խորքային կառուցվածքի իմաստային քառակուսի. երկրորդ տիպ



Ինչպես նշվեց, ուսումասիրված պատումների նարատիվ և խորքային կառուցվածքների դինամիկան խիստ բազմաբարդ է, և պատումներում կան էական տարբերություններ: Սակայն, ի հակադրություն այդ տարբերությունների և առանձնահատկությունների՝ պատումներում կարելի է տեսնել փուլային անցումները պայմանավորող ընդհանրական տրամաբանություն: Յուրաքանչյուր անհատական կենսափորձում ռացիոնալ–ոչ ռացիոնալ, հասարակական–անձնական–ոչ հասարակական–ոչ անձնական իմաստային տիրույթների հաջորդականության մեջ կարելի է տեսնել ընդհանրություններ՝ այդ անցումները և փոխակերպումները պայմանավորող սոցիալական և մշակութային համատեքստի վերհանման տեսանկյունից: Մասնավորապես, ընդգծվում են փոխհարաբերությունների երեք առանցքային շերտեր՝ կամավոր–թիմ (կամավոր-կամավոր)

փոխհարաբերություններ, կամավոր-կազմակերպություն փոխհարաբերություններ, կամավոր–համայնք (շրջապատ) փոխհարաբերություններ: Այս երեք շերտերում հարաբերությունների բնույթը պայմանավորում է կամավորական փորձառության հետագծի այս կամ այն դրսևորումը:

Վերը քննարկված պատումներում ընդգծվում է, որ իմաստային քառակուսու այս կամ այն տիրույթից անցումները դեպի ոչ անձնական շահի և հասարակական շահի տիրույթ, զուգահեռվում են կամավոր–թիմ և կամավոր–կազմակերպություն փոխհարաբերություններում ոչ ֆորմալ միջավայրի, հորիզոնական-ընկերային հարաբերությունների և կամավոր-համայնք հարաբերություններում ներառման պրակտիկաների դրսևորման հետ:

Ինչ վերաբերում է կամավորական պրակտիկաների՝ ռացիոնալ դաշտ տեղափոխմանը կամ անձնական շահ–ոչ հասարակական շահ բևեռների ընդգծմանը, ապա այս պարագայում կամավոր դառնալու կամ կամավոր լինելու պրակտիկաներին զուգահեռ պրակտիկաներ են կամավորության շահագործման դրսևորումները (կամավոր–կազմակերպություն հարաբերությունների մակարդակում) և կամավորական պրակտիկաների բացասական սանկցավորումը (կամավոր–շրջապատ հարաբերությունների մակարդակում):

Գծապատկեր 7. Կամավորական կենսափորձի խորքային կառուցվածքը



Այսպիսով, պատումների խորքային կառուցվածքում հասարակական շահի բևեռը, հանդիսանալով կամավորության քաղաքացիականության ցուցիչ, առավել հազվադեպ է դրսևորվում (տե՛ս Գծապատկեր 7), ընդ որում՝ ոչ անձնական շահ կամ անձնական շահ բևեռների հետ համադրման ձևով: Հասարակական շահի բևեռին հակադիր, հակասող և փոխլրացնող բևեռներն ավելի հաճախ են դրսևորվում (տե՛ս Գծապատկեր 7), որի հիմքում վերը նշված շահագործման կամ բացասական սանկցավորման՝ շրջապատի կողմից կամավորականության «քննադատության» պրակտիկաներն են, որոնք բնորոշում են հասարակությունում կամավորական պրակտիկաների համատեքստում քաղաքացիականության կոդի բացակայությունը:

Այս ամենը կարելի է ընդհանրացնել անդրադառնալով Յ. Հաբերմասի՝ լեգիտիմացման ճգնաժամի հայեցակարգին (Haberman, 1973): Այս հայեցակարգի կենսաշխարհ–համակարգ մոդելը, պրոյեկտելով կամավոր–քաղաքացիական հասարակություն փոխհարաբերությունների վրա, կարելի է փաստել, որ հայաստանյան հասարակությունում քաղաքացիական հասարակության (համակարգ) լեգիտիմության ճգնաժամը, որի ցուցիչն են ՔՀԿ-ներում կամավորի շահագործման պրակտիկաները և շրջապատի կողմից «կամավոր դառնալու» կամ «կամավոր լինելու»

լեգիտիմության պակասը, հանգեցնում է կամավորի մակարդակում մոտիվացիոն ճգնաժամի դրսևորման (տե՛ս Գծապատկեր 8)։

Գծապատկեր 8. Լեգիտիմության և մոտիվացիոն ճգնաժամերը կամավոր–քաղաքացիական հասարակություն հարաբերություններում



Եզրակացություն

Հայաստանյան երիտասարդների կամավորական գործունեության գաղափարախոսական հիմքերի և մշակութային դրսևորումների բացահայտմանն ուղղված սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծությամբ կարող ենք փաստել, որ հայաստանյան համատեքստում կամավորականության նկատմամբ պետական վերահսկողության՝ օրենսդրական համապարփակ կարգավորումների և ռազմավարության բացակայության պայմաններում ՔՀԿ ոլորտում երիտասարդների կամավորական գործունեության միջավայրը կարելի է բնորոշել որպես ինքնակարգավորվող և ինքնագործառնող ուրույն տիրույթ։ Այդ ինքնակարգավորվող տիրույթում առանցքային դերակատարներն են ՔՀԿ-ները և երիտասարդ կամավորները, որոնց փոխհարաբերություններն ախտորոշում են հայաստանյան համատեսքտում կամավորականության երկակի գաղափարախոսությունների հակադրությունը և կամավորականության մշակութային տարաբնույթ դրսևորումները։

1. *Կամավորականության գաղափարախոսություններ.* հետազոտության արդյունքների ընդհանրացմամբ կարելի է հակադրել կամավորականության գաղափարախոսությունները ՔՀԿ-ի և կամավորի դիրքերից։ ՔՀԿ դիրքից կամավորականության գաղափարախոսության հիմքում ընդգծվում է քաղաքացիականության կոդը։ Այսինքն՝ ՔՀԿ-ների սահմանումներում կամավորականությունը հանդիսանում է քաղաքացիական պրակտիկա, որում կենտրոնական է «հասարակական շահի» և «ուրիշի նկատմամբ բարիք ստեղծելու» գաղափարը։ Կամավորների դիրքից կամավորականության գաղափարախոսական հիմքերը որոշակիորեն այլ են. այստեղ առանցքային են դառնում «անձնական շահի», «ոչ **հասարակական** շահի» կամ «ոչ անձնական շահի» իրացման գաղափարախոսական պրակտիկաները։
2. *Կամավորականության մշակութային դրսևորումներ.* երիտասարդների կամավորական գործունեությանը բնորոշ մշակութային պրակտիկաներում առանձնանում են եռաշերտ հարաբերություններ՝
   2.1. կամավոր–թիմ (կամավոր-կամավոր) փոխհարաբերություններ,
   2.2. կամավոր-կազմակերպություն փոխհարաբերություններ,
   2.3. կամավոր–համայնք (շրջապատ) փոխհարաբերություններ։

Հարաբերությունների բնույթն այս երեք մակարդակներում պայմանավորում է երիտասարդների կամավորական պրակտիկաների մշակութային ձևերը և վերջիններիս փոխակերպումները երիտասարդների կամավորական կենսափորձում։

3. *Կամավորականության մոտիվացիա և կամավորականության լեգիտիմությունը.* հայաստանյան երիտասարդների կամավորական գործունեության մոտիվացիոն մեխանիզմների վերհանումը՝ ըստ կամավորական փորձառության փուլային տրամաբանության, ընդգծում է վերջիններիս փոխակերպման ընթացքում ոչ ռացիոնալ (ոչ անձնական շահ–ոչ հասարակական շահ) հիմքերի դոմինանտությունը։ Ոչ ռացիոնալ մոտիվացիոն մեխանիզմների առկայության և գերակշռման հիմքում ընդգծվում է ՔՀԿ–կամավոր փոխհարաբերություններում քաղաքացիական պրակտիկաների պակասը և կամավոր–հասարակություն փոխհարաբերություններում «կամավոր դառնալու» և/կամ «կամավոր լինելու» ոչ լեգիտիմությունը։

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ կամավորական գործունեության համատեքստում հայաստանյան երիտասարդների շրջանում առկա է մոտիվացիոն ճգնաժամ՝ պայմանավորված քաղաքացիական գաղափարախոսության լեգիտիմության պակասով։

Գրականություն

Մկրտիչյան, Ա., Վերմիշյան, Հ., Բալասանյան, Ս., 2016: *Անկախության սերունդ: Հետազոտություն երիտասարդների շրջանում. Հայաստան 2016:* Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/13148.pdf

Պանով, Լ., Հարթել, Է., Տիգրանյան, Հ., 2017: *Կամավորության լավագույն չափանիշների եւ հաջողված փորձի ուղեցույց*: Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ. https://www.moj.am/storage/uploads/001_kamavorutyan_lavaguyn.pdf

Սաղաթելյան, Ս., 2020: *Գերմանական սոցիոլոգիական միտքը*: ԵՊՀ հրատ.. https://doi.org/10.46991/YSUPH/9785808424265

Adloff, F., 2018. *Civil Society.* In Outhwaite W. and Turner S. P., 2018) The Sage Handbook of Political Sociology (pp. 398–412). SAGE Publications Ltd.

Clary, E. G., & Snyder, M., 1999. *The Motivations to Volunteer: Theoretical and Practical Considerations.* Current Directions in Psychological Science, 8(5), 156–159. https://doi.org/10.1111/1467-8721.00037

Clary, E. G., Snyder, M., Ridge, R. D., Copeland, J., Stukas, A. A., Haugen, J., & Miene, P., 1998. *Understanding and assessing the motivations of volunteers: A functional approach.* Journal of Personality and Social Psychology, 74(6), 1516–1530. https://doi.org/10.1037/0022-3514.74.6.1516

Clary, E. G., Snyder, M., & Stukas, A. A., 1996. *Volunteers' Motivations: Findings from a National Survey.* Nonprofit and Voluntary Sector Quarterly, 25(4), 485–505. https://doi.org/10.1177/0899764096254006

Cohen, J. L., & Arato, A., 1992. *Civil society and political theory.* MIT press Cambridge, MA.

Edwards, M., 2004. *Civil Society* (1st ed.). Polity Press.

Ehrenberg, J., 1999. *Civil Society: The Critical History of an Idea.* Theory and Society, 29(2), 275–285. https://www.jstor.org/stable/40403842

Gevorgyan, V., & Galstyan, M., 2016. *Why volunteer? Understanding Armenia's experience.* Voluntary Sector Review, 7(3), 325–332. https://doi.org/10.1332/204080516X14722016138748

Habermas, J., 1973. *Legitimation crisis* (translated by, Trans.). Heinemann Educational Books.

Habermas, J., 1989. *The structural transformation of the public sphere: An Inquiry into a Category of Bourgeois Society.* In Contemporary Sociology. The MIT Press. https://bit.ly/3vh5mvD

Howard, M. M., 2003. *The Weakness of Civil Society in Post-Communist Europe.* In The Weakness of Civil Society in Post-Communist Europe. Cambridge University Press. https://doi.org/10.1017/CBO9780511840012

Hustinx, L., Cnaan, R. A., & Handy, F., 2010. *Navigating Theories of Volunteering: A Hybrid Map for a Complex Phenomenon.* Journal for the Theory of Social Behaviour, 40(4), 410–434. https://doi.org/10.1111/j.1468-5914.2010.00439.x

International Center for Not-for-Profit Law (ICNL)., 2010. *The legal framework for volunteerism: Ten years after international year of volunteers 2001.* Global Trends in NGO Law, 2, 1.

https://www.icnl.org/resources/research/global-trends-ngo-law/the-legal-framework-for-volunteerism-ten-years-after-international-year-of-volunteers-2001

International Federation of Red Cross and Red Crescent Societies, A., Inter-Parliamentary Union, A., & United Nations Volunteers, A., 2004. *Volunteerism and Legislation: A Guidance Note.* https://bit.ly/3rk6a1z

International Labour Office., 2011. *Manual on the Measurement of Volunteer Work.* In Measurement (Issue March). International Labour Office. https://bit.ly/3jCzqMI

Juknevičius, S., & Savicka, A., 2003. *From Restitution to Innovation.* In P. Dekker & L. Halman (Eds.), The Values of Volunteering: Cross-Cultural Perspectives (pp. 127–142). Springer US. https://doi.org/10.1007/978-1-4615-0145-9

Kenny, M., 2016. *civil society.* In Encyclopedia Britannica. https://www.britannica.com/topic/civil-society

Musick, M. A., & Wilson, J., 2008. *Volunteers: A social profile.* Indiana University Press.

Nelson, T., 2005. *A comparative look at national volunteerism legislation. The Inter-American Initiative for Social Capital, Ethics and Development,* Inter-American Development Bank. http://www.volunteerspirit.org/files/Volunteer%20legistraive.pdf

Paturyan, Y., & Gevorgyan, V., 2014. *Trust towards NGOs and volunteering in South Caucasus: civil society moving away from post-communism?* Southeast European and Black Sea Studies, 14(2), 239–262. https://doi.org/10.1080/14683857.2014.904544

Paturyan, Y. J., & Gevorgyan, V., 2014. *Armenian civil society after twenty years of transition: still post-communist?* Turpanjian Center for Policy Analysis, American University of Armenia. https://bit.ly/3JAnS76

Paturyan, Y. J., & Gevorgyan, V., 2017. *Volunteering in Armenia: Leaving the Soviet Legacy Behind?* In J. Butcher & C. J. Einolf (Eds.), Perspectives on Volunteering: Voices from the South (pp. 227–243). Springer International Publishing. https://doi.org/10.1007/978-3-319-39899-0

Piliavin, J. A., Grube, J. A., & Callero, P. L., 2002. *Role as Resource for Action in Public Service.* Journal of Social Issues, 58(3), 469–485. https://doi.org/10.1111/0022-4537.t01-1-00027

Salamon, L.-M., Sokolowski, S.-W., & List, R., 2003. *Global Civil Society. An Overview.* Center for Civil Society Studies, Institute for Policy Studies, The Johns Hopkins University. http://ccss.jhu.edu/wp-content/uploads/downloads/2011/09/Book_GCSOverview_2003.pdf

Seligman, A. B., 1992. *The Idea of Civil Society.* The Free Press A Division of Macmillan, Inc.

United Nations Volunteers (UNV)., 2011. *Drafting and Implementing Volunteerism Laws and Policies: A Guidance Note.* https://www.icnl.org/wp-content/uploads/cfr_vollawpol.pdf

United States Agency for International Development, A., Bureau for Democracy, Conflict and Humanitarian Assistance, A., & Center of Excellence on Democracy, Human Rights and Governance, A., 2020. *2019 Civil Society Organization Sustainability Index: Armenia.* https://bit.ly/37FWc3i

Weber, M., 1956. *The Nature of Social Action*, Economy and Society 4th edn, Tubingen, First published in 1922.

Wilson, J., 2000. *Volunteering.* Annual Review of Sociology, 26(1), 215–240. https://doi.org/10.1146/annurev.soc.26.1.215

Wilson, J., & Musick, M., 1997. *Who Cares? Toward an Integrated Theory of Volunteer Work.* American Sociological Review, 62(5), 694–713. https://doi.org/10.2307/2657355

Тичер, С., Мейер, М., Водак, Р., & Веттер, Е., 2009. *Методы анализа текста и дискурса.* Гуманитарный центр.

Աբստրակտ

Կամավորականության՝ քաղաքացիական պրակտիկայի տարածման ժամանակակից միտումների համատեքստում ընդգծվում է հայաստանյան ՔՀԿ ոլորտում կամավորական պրակտիկաների ուսումնասիրման արդիականությունը: Կամավորական գործունեության ուսումնասիրումն առավել ակտուալ է դառնում կամավոր աշխատանքներում առավել հաճախ ներգրավվող խմբի՝ երիտասարդների շրջանում: Սույն հետազոտության նպատակն է վերհանել հայաստանյան երիտասարդների կամավորական գործունեության գաղափարախոսական հիմքերն ու մշակութային դրսևորումները: Կամավորական գործունեության գաղափարախոսական հիմքերի և դրանց մշակութային դրսևորումների բացահայտման նպատակով համադրվել են Մ. Վեբերի սոցիալական գործողության հայեցակարգն ու կամավորական գործունեության շարժառիթների դասակարգման ֆունկցիոնալ մոդելը: Տեղեկատվության հավաքման համար կիրառվել են երկրորդային վերլուծության, առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցի և նարատիվ խորին հարցազրույցի մեթոդները: Որպես վերլուծական հիմք՝ ընդունվել է նարատիվ սեմիոտիկայի մեթոդաբանությունը: Հետազոտության արդյունքների մեկնաբանման համար օգտագործվել է Յ. Հաբերմասի լեգիտիմացման ճգնաժամի հայեցակարգը: Հետազոտության արդյունքների հիման վրա կարելի է պնդել, որ կամավորական գործունեության համատեքստում հայաստանյան երիտասարդների շրջանում առկա է մոտիվացիոն ճգնաժամ՝ պայմանավորված քաղաքացիական գաղափարախոսության լեգիտիմության պակասով:

Բանալի բառեր. կամավորական գործունեություն, կամավոր աշխատանք, քաղաքացիական հասարակություն, հասարակական կազմակերպություն, սոցիալական գործողություն, կամավորներ, երիտասարդներ, մոտիվացիա, լեգիտիմություն, նարատիվ սեմիոտիկա

Abstract

The relevance of studying volunteering practices in Armenian CSO sector is highlited in the context of the modern trends of the spread of volunteering as a civil practice. The research on volunteering is even more actual in case of youth, as it is the group which is most engaged in volunteering activities. The current research is aimed at revealing the ideological bases and cultural manifestations of youth volunteering in Armenia. The Socal Action Theory of M. Weber and The Functional Model of volunteering motivation typology are combined and synthesized in order to reveal the ideological bases and cultural manifestations of volunteering. Methods of data collection are secondary data analysis, interviews with key-informants and narrative interviews. The methodology of narrative semiotics is chosen as the analitical basis. The concept of legitimation crisis suggested by J. Habermas is used to interpret the research findings. On the basis of research results it could be claimed that youth volunteering in Armenia can be characterized by the existence of a motivation crisis, which is connected to the lack of civil ideology legitimation.

Keywords: volunteering, volunteer work, civil society, NGO, social action, volunteers, youth, motivation, legitimation, narrative semiotics